

Պատմութիւն Աղուանից. Ա. Հատոր. Ի Մակար Եպիսկոպոսէ Բարխուտարեանց. 1902 Վաղարշապատ.

Մերունազարդ Մակար Սրբազանը մեր այժմեան կուսակրօն հոգևորականութեան հին սերնդի պատուաւոր ներկայացուցիչներից մէկն է. նա իւր կույման վերաբերեալ պարտքը կատարելուց յետոյ՝ ազատ ժամանակը, շատերի նման, բամբասանքով չէ վատնում, այլ գրականութեամբ է պարապում և ժրաջան աշխատութեամբ տալիս է, որքան կարող է, համեմատ իւր պատրաստութեան և հմտութեան. Սրբազանը ժողովրդի մարդ է, սիրում է իւր ազգն ու եկեղեցին և ամեն կերպ ջանք թափում՝ օգտակար լինելու դրանց՝ իւր կարողութեան չափս։

Նորին սրբազնութեան աշխատութիւններից ցանկն արդէն ցոյց է տալիս, որ նա աւելի ժողովրդական գրող է ¹⁾, բայց հետաքրքրուում է նաև պատմութեամբ. գրել է «Աղուանից երկիր և դրացիք», «Արցախ» և այժմ էլ տալիս է «Աղուանից պատմութիւնը»։

Իսկապէս շատ հետաքրքրական նիւթ է ընտրել Սրբազանը. ազգային ծագումով տարբեր, բայց կրօնով հայ ժողովրդի հետ համարեալ թէ ձուլուած աղուանները, տասնեակ դարերի ընթացքում մեզ հետ միասին դատարկելով քաղաքական դժբաղդ անցքերի և կրօնական հալածանքի դառն բաժակը, արդէն անյայտանալու ճանապարհի վրայ են։

Մեր բաղդակից այս ազգի պատմական անցեալը դեռ ևս թանձր քողով է ծածկուած և գիտնական հետազօտութեան չէ ենթարկուած. շատ էլ յոյս չկայ, որ գոնէ ապագայում պարզուի, որովհետև այդ տարաբաղտ ժողովուրդը սեպհական գիր ու գրականութիւնից զուրկ է։ Թէև մեր մատենագիրները պատմում են, որ սուրբ Մեսրոպը հայոց այբուբենը կազմելուց յետոյ վրաց և աղուանների համար ևս այբուբեններ յարմարեցրեց, սակայն մինչև այժմ անյայտ է մնացել աղուանների այբուբենն ու գիրը։

Չնայելով այս ձախողակ հանգամանքին, հայոց պատմագրներն այնքան առատ նիւթ են պարունակում աղուանների վերաբերմամբ, որ կարելի է լինում քիչ թէ շատ կապակցուած

¹⁾ «Միրչա և Աննա», «Արազը տարին կտարի», «Պլըբ Պուղի» և այլն։

պատմական տեղեկութիւններ շարայարել այդ ազգի և առաւելագլէս գրա եկեղեցական պատմութեան նկատմամբ: Աղուանից կաթողիկոսութիւնը ստորագրուած լինելով հայ կաթողիկոսների իշխանութեանը, հայ եկեղեցական մատենագիրներն էլ միշտ յիշել են դրանց կաթողիկոսների անունները և նոյն իսկ Աղուանից կաթողիկոսների յաջորդական ըստ կարելոյն լիակատար ցանկ են տուել մեզ:

Ունենք նոյն իսկ եօթերորդ դարում ապրող հայ մատենագիր—Մովսէս Կաղանկատուացի,—որ յատկապէս աղուանների պատմութիւնն է գրել՝ սկզբից մինչև իւր օրերը. ապա մի ուրիշն այդ պատմութիւնը շարունակել է մինչև տասներորդ դարի կէսը՝ Մովսէս Դասխուրանցի:

Մակար Սրբազանն ասն այս և հայոց ուրիշ մատենագիրների ասածները հիւսելով՝ կազմել է աղուանների պատմութիւնը և հասցրել մինչև *մէլիքութիւնների* ծագումը, այսինքն մինչև *տաւանեհինգերորդ* դարու կէսերը: Աւելի հետաքրքրական պէտք է լինի Աղուանից պատմութեան շարունակութիւնը մինչև մեր օրերը. հեղինակն անշուշտ այդ մասն էլ կհրատարակէ, քանի որ այս աշխատութեան ճակատին գրուած է «Ա. հատոր»:

Մակար սրբազանի աշխատութիւնը կարող է մեծապէս նպաստել ապագայում աղուանների պատմութիւնը գիտնականօրէն մշակողին. նրա տուած նիւթերը կամ վստահելի մատենագիրներից են վերցրած կամ իրական արձանագրութիւններից ու տապանաքարերից. ինքը, հեղինակն անձամբ մասն է եկել Աղուանից աշխարհ կոչուած երկրում և շատ բան տեղն ու տեղը ճշտել:

Գովիլով բազմաշխատ սրբազանի քրտնաջան վաստակը, ցանկալի ենք համարում, որ նա իւր աշխատութեան երկրորդ հատորի մէջ ամփոփէ այն բազմաթիւ *Նիւթերը*, որ հաւաքել է Աղուանից աշխարհում *մէլիքների* և *մէլիքութիւնների* մասին: